



Հինգ բան, որ պետք է իմանալ Կալիֆոռնիա Նահանգի վճարովի ընտանեկան արձակուրդի մասին

1. Դուք կարող եք ունենալ ութ շաբաթվա աշխատավարձի մասնակի փոխհատուցում ստանալու իրավունք:

Կալիֆոռնիա Նահանգի վճարովի ընտանեկան արձակուրդը (California Paid Family Leave, PFL) յուրաքանչյուր 12 ամիսը մեկ աշխատողներին տրամադրում է մինչև 8 շաբաթ մասնակի աշխատավարձի փոխհատուցում: Ձեր PFL ժամանակահատվածը կարելի է բաժանել և պարտադիր չէ ամբողջը միանգամից վերցնել:

2. Սա ձեր գումարն է

PFL նպաստների համար ֆինանսավորումը ստացվում է Կալիֆոռնիա Նահանգի հաշմանդամության պետական ապահովագրությունից, որը մեզանից շատերի կողմից վճարվող հարկ է (աշխատավարձերի վճարման անդորրագրերի մեծ մասում նշվում է որպես «CASDI»): Սա ձեր գումարն է, այլ ոչ թե պետական սուբսիդիա: Զաղաքացիության և Ներգաղթի կարգավիճակները չեն ազդում իրավասության վրա:

3. Դուք կարող եք ստանալ ձեր աշխատավարձի մոտավորապես 60-ից 70 տոկոսը:

Եթե վերջին 5-18 ամիսների ընթացքում վճարել եք Կալիֆոռնիա Նահանգի Հաշմանդամության Պետական Ապահովագրության հարկերը, ապա իրավասու կլինեք ստանալ ձեր աշխատավարձի 60-ից 70 տոկոսը: Կարող եք հաշվարկել ձեր շաբաթական նպաստի գումարը՝ օգտագործելով [Disability Insurance and PFL Calculator](http://edd.ca.gov/PFL-Calculator) (edd.ca.gov/PFL-Calculator) հաշվիչը:

4. Սա միայն նորածնի հետ կապ հաստատելու համար չէ

PFL հասանելի է նաև որդեգրող ծնողների և խնամատար ծնողների համար: Հարկավոր է արձակուրդը վերցնել երեխայի՝ ընտանիքին միանալուց հետո 12 ամսվա ընթացքում: Կարող եք PFL-ից օգտվել նաև ընտանիքի ծանր հիվանդ անդամին՝ էրեխա, ծնող, կնոջ կամ ամուսնու ծնող, պապիկ կամ տատիկ, թոռնիկ, քույր կամ եղբայր, ամուսին կամ գրանցված քաղաքացիական գործընկեր) խնամելու համար:

5. Այն արդարացնում է իրեն

PFL- ի դիմումները պետք է ներկայացվեն անհրաժեշտ փաստաթղթերով հանդերձ, իսկ դիմումների մշակումը կարող է տևել քանի շաբաթ: Վերցրեք այն ժամանակը, որն անհրաժեշտ է կարևոր պահերին տեղում լինելու համար:



CALIFORNIA
PAID FAMILY LEAVE
moments matter.

EDD Employment
Development
Department
State of California

Ավելին իմանալու համար այցելեք
CaliforniaPaidFamilyLeave.com

EDD-ն հավասար հնարավորությունների գործատու- ծրագիր է: Ըստ պահանջի օժանդակ օգնություն և ծառայություններ են հասանելի հաշմանդամություն ունեցող անձանց համար: Ծառայությունների, օգնության և (կամ) այլընտրանքային ձևաչափերի վերաբերյալ հարցումները պետք է կատարվեն՝ զանգահարելով 1-866-490-8879 (ձայնային) հեռախոսահամարով: TTY օգտագործողներին խնդրում ենք զանգահարել Կալիֆոռնիա Նահանգի Կոմունոստորային ծառայության (California Relay Service) 711 հեռախոսահամարով: